

ՅԵՎԳԵՆԻՅ ՉԱՐՈՒՇԻՆ



891.715

2-98

Գ Ա Յ Լ Ի Զ Ա Գ Ը

ՅԵՎ ՈՒՐԻԾ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

30 MAY 2011

Յ Ե Զ Ա Ր Ո Ւ Շ Ի Ն

891.715
2-28 uf

Գ Ա Յ Լ Ի Ձ Ա Գ Ը

Յ Ե Վ

Ո Ւ Ր Ի Շ Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Ք Ն Ե Ր


Հ Ա Պ Ե Կ Ն Ո Ւ Ն Կ Ա Ր Ն Ե Ր Ը Հ Ե Ղ Ի Ն Թ Կ Ի

1010
42588



Հ Ս Խ Հ

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Յ Ե Ր Ե Վ Ա Ն Թ 1 9 8 6



17 6 JUL 2013

95 12

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՅԵՎ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Ռուս. բարգվ. Ն. Տ. Կարայեյան
Խմբագրեց Ա. Առսամյան
Տեխն. խմբ. Տ. Խաչվանյան
Սրբագրիչ՝ Ա. Արզումանյան

Գլավրիտի լիազոր Գ—1076, պատվեր 564
Հրատ. 3654, տիրած 5000
Պետհրատի տպարան
Յերեվան, II Գնունի, 4

Հանձնված է արտադրության 13 մարտի 1936 թ.
Ստորագրված է տպելու 5 հունիսի 1936 թ.

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.

ЕВГЕНИЙ ЧАРУШИН
ВОЛЧИШКО И ДРУГИЕ
Гиз ССР Армении, Эривань

Գ Ա Յ Լ Ի Ջ Ա Գ Ը



Գայլի ձագն իր մոր հետ միասին ապրում
եր անտառում: Մի անգամ մայրը գնաց վորսի:

Մի մարդ բռնեց գայլի ձագին, կոխեց
պարկն ու բաղաք բերեց: Պարկը դրեց սենյակի
մեջտեղը:

Յերկար ժամանակ պարկը չեր շարժվում: Քիչ հետո
պարկում գայլի ձագն սկսեց շարժվել ու դուրս
յեկավ
պարկից:

Նայեց մի կողմ, վախեցավ—
մարդը նստած նայում է իրեն:

Մյուս կողմը նայեց — կատուն
է փշաքնում՝ նա փքվել, յերկու
անգամ ինքն իրենից հաստացել
և հազիվ է կանգնում: Նրա կողքին
շունն է ատամները կրճտացնում:

Գայլի ձագը շատ վախեցավ: Ուզեց նորից մտնել պար-
կը, բայց չկարողացավ:



Իստարկ պարկը փռված էր հատակին, ջնջոցի նման:
Կատուն փքվում, ուռչում ու փշաքնում էր: Նա թռավ
սեղանին ու վայր գցեց ափսեն: Ափսեն փշուր-փշուր յեղավ:

Շունը հաջեց: Մարդը բարձր ձայնով հռնաց: Հն, հն,
հն, հն:

Գայլի ձագը վախից փախավ, մտավ բազկաթռուի տակ,
մնաց այնտեղ ու սկսեց դողալ:



Բազկաթռուը դրված էր սենյակի մեջ-
տեղը: Կատուն բազկաթռուի թիկունքից
անվերջ նայում էր ներքև, իսկ շունը վազ-
վրդում էր բազկաթռուի շուրջը:

Մարդը բազկաթռուին նստած ծխում էր:
Գայլի ձագը բազկաթռուի տակ վախից

հազիվ էր շնչում:

Գիշերը մարդը քնեց: Քնեց և շունը, իսկ կատուն
կկոցել էր աչքերը: Կատունները սովորաբար չեն քնում, այլ
ննջում են:

Գայլի ձագը դուրս յեկավ և նայեց
չորս կողմը քիչ ման յեկավ, հոտոտեց ու
սկսեց վրոնալ:

Շունը հաջեց, կատուն թռավ սեղանի
վրա, իսկ մարդը նստեց մահձակալին,
ձեռքերը շարժեց ու սաստիկ բղավեց:

Գայլի ձագը նորից մտավ բազկաթռուի տակ ու լուռ
մնաց:

Առավոտյան մարդը կաթը լցրեց փոքրիկ թասի մեջ
ու դուրս գնաց տնից:

Կատուն ու շունն սկսե-
ցին լակել կաթը:

Գայլի ձագը դուրս յեկավ
բազկաթռուի տակից, կամա-
ցուկ սողաց դեպի դուռը:
Դուռը բաց էր: Դռնից անցավ



դեպի սանդուղքը, սանդուղքից փողոց, փողոցից կամուրջ,
կամուրջից բանջարանոց, իսկ բանջարանոցից դաշտ:

Կաշտի այն կողմն անտառն եր, իսկ
անտառում իր մայրը:



Նրանք իրար հոտոտեցին, ուրախացան ու վազեցին
անտառով:



Իսկ այժմ, տես, թե զայլի ձագը
ինչպիսի մայր գայլ ե գարձեր:

Յ Ե Ղ Ն Ի Կ Ն Ե Ր Ը



Կենդանաբանական այգին եյին բերել այժի մեծության յերկու փոքրիկ յեղնիկներ, վորոնք կոչվում եյին «մուկակներ» և ծագումով Հնդկաստանից եյին:

Արու յեղնիկն ուներ յերկու յեղանաձև յեղջուրներ, իսկ մյուսը չուներ: Նրանց աչքերը մեծ եյին, սև, և մարդու պես արտևանունքներով:


Մարդկանցից բոլորովին չեյին վախենում: Մառը քրթերը կոխում եյին մարդկանց բռան մեջ և կեր խնդրում:



Նրանք շատ եյին սիրում, յերբ քորում եյին նրանց ականջների հետևը:

Մի անգամ տեսա, վոր նրանց վանդակը ծածկված է բրեզենտով և կողքերից ամրացրած մեխերով, վորպեսզի մարդիկ չկարողանան բաց անել:

— Ինչո՞ւ յեն յեղնիկներին ծածկել, — հարցնում եմ յես: — Յեղնիկը ծնել ե:



Յես չհամբերեցի, և այնուամենայնիվ ներս նայեցի:

Տեսա այնտեղ կատվի մեծության յերկու փոքրիկ յեղնիկներ, վորոնք դեղին գույնի եյին, սպիտակ բծերով: Կանգնած, ականջները խլշած, աչքերը հառել եյին ինձ վրա:

Վրտները մատիտի չափ բարակ եյին, առաջի վրտները ծնկների մոտ կաշում եյին իրար, իսկ ծնկներից ցած գետնին մոտիկ բաժանված եյին յերկու կողմի վրա:

Չուած աչքերով հիմար յեղնիկներ եյին:

Նայեցին, նայեցին, վախեցան ինձնից, խրտնեցին ու հետևները դարձրին դեպի ինձ:

Իսկ նրանց մայրը, վորը միշտ հանգիստ եր, հանկարծ հարձակվեց ինձ վրա, և անեղջուր ճակատը իպրեց ցանկապատին:



Այնուհետև յերկար ժամանակ չգնացի կենդանաբա-
նական այգին:

Մի անգամ յեղա այգում, և վանդակում չորսի փոխա-
բեն յերեք յեղնիկ տեսա: Փոքրիկ յեղնիկն արդեն մեծա-
ցել, դարձել էր մոր չափ: Յեղջյուրները ճակատի վրա
տճել, մեծացել էյին, իսկ մորթին դեռ մանկական էր
— դեղին և սպիտակ բծերով:

— Վորտեղ ե մյուսը, — հարցնում եմ յես:

— Բրեզենտը վանդակի վրայից հանելուց հետո մեկը
կանֆետ էր տվել նրան, յեղնիկն էլ այդ կանֆետը կերել
էր և լուսադեմին սատկել:

Խեղճ, թույլ յեղնիկ էր:

Բ Ո Ւ Լ Դ Ո Ք Շ Ն Ի Կ Ը





Նազգայուլ տատը նայեց Միմկային, վախեցավ և նույն-
իսկ ատեց նրան:

Կարծես իսկ և իսկ հրեշ լիներ. ու հրեշ ել անվանեց:
Միմկան Ֆրանսիական բուլդոգ կոչվող ազնվացեղ շուն
եր: Նա մի ամսական եր, մարմինը դեռևս մերկ՝ առանց
բրդի:

Մերկ մարմինը բացկապույտ գույնի յեր, վարդա-
գույն պեպեններով: Այդ նշանակում եր, վոր յերբ մեծա-
նա, կզառնա մոխրագույն, սպիտակ բծերով: Պոչ չուներ,
նրա տեղ մնացել եր պոչի մի փոքրիկ կտոր, վորի վրա
դրված եր կոմպրես, մի փոքրիկ սրվակով: Շատ ժամանակ
չեր անցել, յերբ կտրել եյին նրա պոչը:

Գլուխը նման եր կնճռոտ գնդակի: Քիթը տափակ եր,
ներքեի շրթունքը դեպի առաջ ցցված և լեզուն դուրս ըն-
կած դեպի մի կողմ: Հետևի վոտները հազիվ եյին շարժվում
և քայլելիս ծովում եյին այս ու այն կողմ:

Նազգայուլ տատը, թեև տատը տարի յե, ինչ ապրում եր
քաղաքում, բայց և այնպես մի պարզ ու հասարակ գեղջ-
կուհի յեր: Նա կուզենար ունենալ մի այնպիսի գամփու, վոր
պոչը կեռ արած ման գար, ականջները կատարին ցցված
լինեյին, լիներ կատաղի, հաջեր ու գողերին վախեցներ:

Նա քաղաքի բոլոր տեսակի շներին համարում եր
անպետք: Իսկ նրա աղջիկը, ընդհակառակը, սիրում եր
ազնվացեղ շների: Միմկան նա նվեր եր ստացել:

Շատ տեսակի շներ կան բազմացրած: Այդ բոլոր տե-
սակի շներն ել ոգնում են մարդուն և զանազան ոգնու-
թյուն ցույց տալիս նրան: Կան որինակ՝ ձի-շուն, քամի-
շուն, զանգակ-շուն, հոգի-շուն, խուզարկու-շուն, խաղա-
լիք-շուն և այլն: Կան շների տեսակներ, վորոնք մեզնից
հարյուր, յերկու հարյուր և կամ հազար տարի առաջ են
առաջացել: Այդ տեսակի շներից յուրաքանչյուրը պետք ե
գալիս կարիքի համար: Ամեն մի տեսակի շուն իր գոր-
ծում ե հերոս, մի այլ գործում նա բոլորովին անպետք ե:
Վորսկան քամի-շունը վազելիս ուղղակի թռչում ե: Հարթ
դաշտում նա անցնում ե բոլոր տեսակի շներից, վազելով
բռնում ե նապաստակին, իսկ անտառում վազել չի կարո-
զանում, խիվում ե ծառերին և ջարդ ու փշուր լինում: Խա-
ղալիք-շնիկը հաջելու և չարանալու սովորությունն արդեն
ոմնացել ե, և, թեկուզ իր մոտ սպանեն իր տիրոջն անգամ,
նա դուրս չի գա պաշտպանելու նրան, սակայն ամենա-
խելացի շունն ե: Չանգակի շունը, մի փոքրիկ շնիկ ե: Այդ
տեսակի շներին բուրժուա կանայք ման են ածում
իրենց ձեռնամուշտակներում:
Նրան սովորեցրել են հաջել
և նա ամբողջ ժամանակ հա-
ջում ե: Ամեն ինչ գայրաց-
նում ե նրան: Ճանճի թռչելը
նրան ուղղակի կատաղության
ե հասցնում: Մեկը նրա մոտ
բարձր ձայնով խոսեց թե չե,
դրանից նա անասելի կշղայ-



նանա: Բավական ե, վոր սեղանի վրայից հանկարծ մի վորևե իր ընկնի. նա սաստիկ կջղայնանա: Իսկ յեթե ավելի սաստիկ գրգռեն նրան՝ նա ուղղակի կմեռնի սրտի պայթյունից:



Պահապան բուլղոզին հարկավոր եր դաժան մոռթ, վոր ոտար մարդը տեսնելիս դողար նրանից, լայն կուրծք, վոր մարդու վտաքերից բռնելուն պես գետին գլորեր նրան, իսկ ծնոտներն աքցանի նման, վոր բռնելուն պես ամուր սեղմեր ու բաց չթողներ թշնամուն: Նա այդ բոլոր հատկություններն ունի, սակայն մարդն ուշադրություն չի դարձրել նրա հետևի վտտների զարգացման վրա, դրա համար ել բուլղոզի հետևի վտտները թույլ և յերերուն են:

Միմկայի հետին թաթերն ել կարծես թե իզուր տեղն եյին կախված մարմնից: Նա ուտելիս իր ամբողջ մարմինը բարձրացնում եր վեր, կանգնում առաջին թաթերի վրա և ուտում: Կանգնում եր՝ ամուր վտտները լայն չռած:

Նազգյուլ տատին այս բոլորի մասին վոչինչ չեյին ասել: Յեվ այդպես նա Միմկային չեր սիրում, և անվանում եր նրան «հրեշ» և համարում եր պիղծ:

Մի անգամ Նազգյուլ տատը Միմկային տարավ ման ածելու: Նազգյուլ տատի համար բավական դժվար եր իջնել և կրկին բարձրանալ հինգերորդ հարկը: Միշտ նրա աղջիկն եր Միմկային տանում ման ածելու:

Իսկ այս անգամ, չգիտեմ ինչու, ինքը Նազգյուլ տատը տարավ:

Շուտով նա հետ դարձավ կարմրած դեմքով, աչքերը արտասուքով լիքը ու բղավեց:

—Հը, ինչ ե, յես ծաղրածու յեմ, յես ծաղրածու յեմ: Նազգյուլ տատը, Միմկայի պարանոցի թուկը բռնած,

նրան տանում ե ներքև՝ ման ածելու, նա ամաչում ե, վոր այդ հրեշին ինքն ե տանում: Մտածում ե՝ ինչպես անի, վոր ուրիշները չտեսնեն: Սակայն յերեխաները տեսնում են, մոտ են վազում, ուրախանում և հետո հանկարծ ճչում:

—Ելի, ելի, Նազգյուլ տատի, Փոկուս: Փոկուս—մոկուս ցույց տուր:

—Ի՞նչ Փոկուս, կորեք գնացեք, լկտիներ,—բղավում ե Նազգյուլ տատը:

Նա ամաչում ե, վոր ինքն այդ հրեշի հետ ե:

—Թող թռչկոտի շնիկը, Նազգյուլ տատի, Փոկուս անի,—խնդրում, գոռում, գոչում եյին յերեխաները:

Յերեխաների ձայնի վրա բոլոր դռներից դուրս են թափվում տնվորները: Բարևում են Նազգյուլ տատին, ժպտում են և նայում Միմկային, իսկ յերեխաներն աղմուկում են ու խնդրում նրան Փոկուս ցույց տալ:

Բարկանում ե Նազգյուլ տատը և արագ-արագ քայլերով իջնում ներքև: Յերեխաներն ավելի յեն ուրախանում, իսկ տնվորները հոհոում են:

—Կեցցե, այ ապրես Նազգյուլ տատի, կատարյալ կրկես ե:

Նազգյուլ տատը մի րոպե կանգ ե առնում, նայում չորս կողմը և վոչ մի բան ծիծաղելի չի գտնում, վոր Միմկան լեզուն ավելի շատ ե դուրս գցել և թափահարում ե կտրած պոչը:

Նորից շարունակում ե իջնել ցած:

Նրա յետևից բոլորն ել քրքջում են ու բարձրաձայն ծիծաղում: Յերեխաները ծիծաղից թուլանում են, նույնպես բակի բոլոր տնվորները:

Նազգյուլ տատը հետ ե նայում ու ինչ տեսնի, մերկ մարմնով լակոտը, առաջի թաթերի վրա ծառս յեղած, հաս-

Նու՛մ ե իր հետևից, թրխկ թրխկ, գլխիկոնձի տալով թռչում
ե սանդուղքի մի աստիճանից մյուսը: Բարկու՛թյունից լա-
լիս ե Նազգյուլ տատը և առանց հետ նայելու բարձրա-
նում հինգերորդ հարկ իր սենյակը:

Մյուս ուրը Միմկային տալիս են իրենց ծանոթներին:

ԱՐՋԻ ՔՈԹՈԹՆԵՐԸ

88524
1010



Վորսորդները տարբեր շրջաններում սպանեցին յերեք արջ ու նրանց նորածին քոթոթներին վաճառեցին կենդանաբանական այգուհն:

Այգուհ յերեքին ել գրեցին մի վանդակում: Դրանցից մեկը մոխրագույն եր, մեկը շիկագույն, իսկ յերրորդը սեփագույն, բոլորն ել մեկը-մյուսից տարբեր հասակի:

Ամենափոքրն ավելի մռայլ եր:

Նա անկյունում նստել, փորն ե քորում, թաթը ծծում ու ամբողջ ժամանակ փնթփնթում:

Մյուս յերկուսն ուրախ ու զվարթ են, կոխ են բռնում իրար հետ, վանդակն իվեր բարձրանում, գլխիկոնծի տալիս, գոռոռում ու ծանր հևում: Յերեքն ել մեծագլուխ, մեծափոր ու ծուռթաթավոր քոթոթներ են:

Մեկը թեև ամենից խոշորն եր, բայց ուտել դեռևս չգիտեր:

Նրան կերակրում եր այգու աշխատակցուհին, ծծակով: Կաթը լցնում եր շի մեջ, բերանը կոխում մի շորի կտոր և շիջը տալիս նրան: Քոթոթը թաթերով բռնում եր շիջը և ծծում կաթը: Վոչ վոքի չեր թողնում մոտենալ իրեն, փնթփնթում եր և զարհուրելի յեր: Մյուսն սպիտակ կրծքով սևավուն քոթոթը, ամբողջ ժամանակ վանդակի յերկաթե ձողերով բարձրանում եր վեր և նորից սոթ տալիս ու ընկնում վանդակի հատակին: Յերկաթե ձողիկները սոթլիկ եյին. յերկու վերջոկ վեր բարձրանալիս, մի վերջոկ ցած

եր սոթում: Բարձրացավ, հասավ մինչև կեսը, հոգնեց ու ել չկարողացավ վեր բարձրանալ: Չորս թաթերով ել աշխատում եր: Բարկությունից գոռոռում եր, ուզում եր բարձրանալ առաստաղը, բայց բան չեր դուրս գալիս՝ ընկնում եր ցած: Իր խելքով հնարք արեց՝ ատամներով բռնեց յերկաթե ձողիկներն ու ամբողջ մարմնով կախ ընկավ թաթերը հանգստացնելու համար: Ինչ մնաց կախված, հանգրստացավ ու միանգամից բարձրացավ մինչև առաստաղը: Կախ ընկավ առաստաղից, հանկարծ պոկվեց նրանից ու թրխկ ընկավ հատակին: Գոռաց հուսահատական ձայնով: Մոտ վազեց աշխատակցուհին, գրկեց, որորեց և շոյեց: Քոթոթը հանգստացավ:

Աշխատակցուհու գրպանից կանֆետի հոտ առավ, հանեց նրա գրպանի կանֆետը և թղթով կոխեց բերանը. սկսեց ծծել կանֆետը և ծփծփացնել բերանը:

Իերին կաթնապուր: Իոլորն ել վազեցին դեպի տաշտակը, հրհրեցին իրար, մտան ուղղակի տաշտակի մեջ, զգվեցին, բերանները չփչփացրին, մոնչացին ու փնչացրին: Հանկարծ մեկը գոռաց: Գոռում ե ամբողջ կոկորդով, քացի-քապի անում, իրեն պատեպատ տալիս ու հատակը պոկոտում:

Այդ այն ծծկեր քոթոթն եր, վոր չեր կարողանում ուտել, ինչպես կարգըն ե: Յերը կաթը տվեցին քոթոթներին, նա դուրս թռավ վանդակից, բարձրանալով ավելի վրայով, վոր դրված եր վանդակի անկյունում: Ավելի վրա բարձրանալուն պես նրա հետ ուժգին կերպով գլորվեց հատակին, և ավելի պոչն ել ծանր հարվածով կպավ իր գլխին:



Պատկեց, աչքերը խփեց, սկսեց գոռալ և ավելի պոչն
եւ գրկել ու բաց չի թողնում թաթերից:


Ծծակը նորից կոխեցին բերանը:

Քոթոթները կերան, վերջացրին կաթնապուրը և այն-
պես կեղտոտվեցին, վոր անկարելի յեր ճանաչել, թե ինչ
գույնի յեն: Իարձել եյին խալավոր:

Կերան և նորից շարունակեցին իրենց խաղը:

Ճանկացա մի քոթոթ գնել, բայց չեւ կարելի:

Վ Ո Զ Ն Ի Ն



Յես մի հայրենակից ունեմ, վորը քաղցրեղեն շատ ե սիրում և սաստիկ վախենում ե մկներից: Մուկ տեսնելիս նա վախից ուղղակի դողում ե:

Առավոտները կոշիկները հագնելիս, միշտ նայում ե նրանց մեջ — չլինի՞ թե մուկ մտած լինի:

Մի որ նա անոթի փորով ուշ գիշերին տուն վերադարձավ, տեսավ վոր իր հայրենիքից ծանրոց են ուղարկել, մեջը լիքը զանազան խմորեղեն — գաթա, փախլավա, փափլիկ-փուփլիկ բլիթներ, թխվածքներ, քաղցրավենիներ և այլն:

Բարեկամս շատ ուրախացավ, ինքնայեռը գցեց, հետո կոացավ ծանրոցի վրա ու հոտ քաշեց: Շատ անուշ հոտ եր գալիս: Կոացավ ավելի մոտիկից հոտ քաշելու ու լսեց, վոր ինչ վոր մի բան ե շարժվում գամբյուղի մեջ:

— Մուկ ե, — մտածեց նա:


Ինքնայեռը յեռաց: Բերեց դրեց սեղանին: Ինքնայեռը դրդրլտում ե և յեռալուց շուրը նրա կափարիչից ցատկում սեղանի վրա, իսկ ինքը քաշվել ե հեռու անկյունն ու ընկել այնտեղ մահճակալի վրա:

— Ինչո՞ւ չես գալիս թեյ խմելու, — հարցնում եմ:

— Չեմ ուզում, — ասում ե:

Ու այդպես ել քաղցած քնեց:

Հետևյալ առավոտ ներս մտա նրա մոտ, ծանրոցը տեսա նույն վիճակում. բաց արի ու սկսեցի փորձել ուղարկած քաղցրեղենները:



Ծանրոցի մեջ թղթերի տակին, բեխերը ցցած շարժվում եր մի մեծ բոլոջ:

Ծանրոցի հետ եր յեկել, և դա յեր, վոր խշաքնում եր թղթերը:

Ընկերս վախկոտ չեք, լավ վորսորդ եր, բայց ինչ արած — վախենում եր մկներից: Խղճացի ու ցանկացա նրան դուրս բերել այդ դրությունից: Չեոք բերի նրա համար մի վոզնի, վոր վորսա սենյակի մկները: Մի փոքրիկ ու մատղաշ վոզնի յեր, բայց կարող եր մկների հախից լավ գալ:

Վոզնին բերեցի տուն, ու մի այլ նրա մոտ գիշերելու, առավոտյան միասին վորսի գնալու համար:

Վոզնին ման ե գալիս սենյակում ու պաշտպանում մկներից: Ուրախացավ բարեկամս ու գիշերը հանգիստ քնեց: Առավոտյան հազիվ կարողացա արթնացնել: Շորերը հագնում ե յերգելով, այլևս մկներից չի վախենում ու կոշիկների մեջ չի նայում:

Յերկարավիզ նեղ կոշիկը քաշում ե վոտքը:

Կոշիկը վոտքը քաշելուն պես հանկարծ ամբողջ կոկորդով գոռաց, գլորվեց հատակին ու թավալվեց:

Նրա ձայնից ներս վազեցին բոլոր տնվորները:

Բոլորս ել ապուշ կտրած կանգնել ենք ու չգիտենք ինչ անենք: Իսկ նա թափալ ե տալիս հատակին, ծեծկվում ե,

բղավում, կարծես թե մեկը ասեցով ծակծկում է նրա մարմինը:

Խղճում ենք նրան ու միևնույն ժամանակ սարսափում նրանից: Չգիտենք ինչ անենք. կանգնած նայում ենք, իսկ նա անվերջ բղավում է: Վերջը ինչ վոր բան բղավեց, բայց թե ինչ ասաց, չհասկացանք: Մենք թափվեցինք նրա վրա, վորպեսզի չծեծկվի հատակին: Քաշեցինք կոշիկը և նրա միջից դուրս գլորվեց վոզնին ու փախավ, մտավ մահճակալի տակ:

Վոզնին գիշերել եր կոշիկում:

Այժմ հայրենակիցս վոզնիներին ել ե ատում. վախենում է նրանցից:

Վ Ա Ր Ա Ձ Ն Ե Ր Ը



Յես նկարում եմ կենդանիներ:

Վաղ առավոտյան ժամը 7—8-ին կենդանաբանական այգում վոչ վոք չի լինում: Նկարելու համար հարմար ժամանակ ե: Վոչ վոք գլխավերևդ կանգնած, ուսերիդ վերայով չի նայում քեզ և խանգարում իր հարձուփորձով: Հարմար ժամանակ ե, այգում միայն գազաններն են և յես:

Նկարում եմ Սերյոժա անունով յեղջերու—մարալին: Նրա յեղջուրները նոր են: Յեղջերուներն ամեն տարի փոխում են իրենց յեղջուրները: Հները թափվում են և նրանց տեղ դուրս են գալիս նորերը, վորոնք սկզբում տաք, դալար ու փափուկ են լինում: Դրանք իսկական յեղջուրներ չեն, այլ դողոշներ (սառած արյունից բաղկացած զանգվածներ), խավոտ կաշյա պատյանով: Հետագայում այդ դողոշներն ամրանում են և դառնում իսկական յեղջուրներ, իսկ կաշին թափվում ե:

Այժմ Սերյոժայի յեղջուրներից կաշին կախ եր ընկած փոքրիկ ծվեններով:

Առավոտները բոլոր գազաններն ել խաղ են անում:

Ամերիկական ինձը (յագուարը) հատակին փայտյա գնդակներ եր գլորում: Հիմալայան շրթնեղ արջը վանդակում կանգնել եր գլխի վրա: Յերեկոները ժողովուրդ յեղած ժամանակ նա կանֆետի համար ե կանգնում գլխի վրա, իսկ այժմ խաղում, զվարճանում եր իրեն համար: Փիղը աշխատակցի կողքին սեղմվել եր պատին, նրա ձեռքից խլել

ավելը և կերել: Գայլերը վանդակում վազվզում եյին, յերբեմն ել մեկը մյուսի չորս կողմը պտույտ գալիս, պարում արագ:

Թռչունների ընդհանուր վանդակում գեղեցիկ կուռնկն եր թռչկոտում և պտույտ գալիս, իսկ մի մոխրագույն կուռնկ զսպում եր նրանց: Հենց վոր մի տեղ անկարգություն, կռիվ, կամ իրարանցում եր տեսնում, առանց շտապելու, ծանր ու մեծ, մոտենում եր նրանց և, ում վոր հարկավոր ե, կտցահարում եր: Թռչնապետ ե նա: Դրա համար ել թռչնանոցներում նրան պահում են վորպես պետ:



Սերյոժան յեղջուրների քոր ուներ: Յեղջուրները նա միշտ բորում եր հետևի վոտներով: Կուռնում եր իմ առաջ, մերթ հարձակվում եր ինձ վրա, վախեցնում, մերթ պարանոցն եր յերկարացնում, ուռնգները բարձրացնում ու գարշելի կերպով փնչացնում: Վախեցնում եր, գուցե և կովի եր հրավիրում:

Առաջի վոտները սուր կճղակներով դոփում եր գետինն ու նոր ծնած հորթի նման պոչը վեր տնկած տրտինգ եր տալիս վանդակում, մինչդեռ ինքը համարյա թե ձիու չափ եր:

Ինձ հետաքրքրում եր նկարելը:

Նկարում եմ գլուխս կախ արած, բացի յեղնիկներից ուրիշ վոչինչ չեյի տեսնում:

Մեկ ել տեսնեմ ինչ վոր մի բան խշխշաց իմ հետևը: Հետ նայեցի և վոչինչ չկարողացա հասկանալ:

Վեց վարագ յերկար շարքով գալիս եյին դեպի ինձ: Առաջինն արդեն ինձնից հինգ քայլի վրա յեր:

Իսկ ռւր ե նրանց առաջին վանդակապատը: Այո, վանդակապատ չկար նրանց առաջ, և նրանք ման եյին գալիս ազատ:

Թևերս բոլորովին թուլացան և ձեռքիս իրերը թափվեցին: Բարձրացա Սերյոժայի վանդակի ցանկապատի վերևն ու նստեցի այնտեղ:

Մեկ կողմից Սերյոժան ե քաջքոտել, բարձրացել ե հետևի վոտքերի վրա, ուզում ե վայր գցել ինձ ցանկապատի վրայից, կոխկրտել ու պոզահարել: Բերանից փրփուր ե թափվում:

Մյուս կողմից վարագներն են:

Իրենք խոշոր, դեղին գույնի կեռ ժանիքներով, մազերը բիզ-բիզ խոզանակի պես: Հավաքվում են իրար գլխի, հնձ վրա չեն նայում:



Ձեն կարողանում գլուխները վեր բարձրացնել: Վերևից ձկան նման նեղ ու բարակ են, միայն ժանիքներն են, վոր ցցված են յերկու կողմից: Մնաք բարով, իմ ընտիր շրաներկեր: Փայտե արկղի հետ միասին բոլորը ծամեցին, խժռեցին:

Ինչ կլիներ իմ հալը, կամ մի ուրիշի հալը, յեթե այդպես խժռեյին:

Հարկավոր եր ձեռք առնել վորևե միջոց. իսկ ի՞նչ միջոց: Ոգնություն կանչել, գուցե վորևե մեկը մոտ վազե, բայց կարող են հարձակվել նրա վրա և դետին տապալել:

Ավելի լավ ե վանդակապատերի վրայով մագլցեմ դեպի շրջապարիսպը, իսկ նրա մյուս կողմը փողոցն ե: Հեռախոսով կզանգահարեմ հրշեջ խումբ, կհայտնեմ վարչության...

Վախենում եմ սողալ բարձրաբերձ ցանկապատի վրայով ու դուրս գալ այգուց: կարող եմ ընկնել, և տեղն ու տեղը շունչ փչել: Ի՞նչ անեմ- աջ կողմից Սերյոժան ե պարում, փնչացնում. ձախ կողմից վարագներն են բերանները ծփծփացնելով գալիս խմբովին:

Ցանկապատի վերևի տախտակը տակս ճռճում ե, կարող ե կոտրվել: Ահից քրտնել եմ:

Հանկարծ ձայն եմ լսում:

— Մաշկա, Մաշկա, Ցաշկա, Պրոշկա, Ակուլկա:

Քիչ մնաց վայր ընկնելի, հազիվ հազ պահեցի ինձ:

Մի փոքրիկ պատանի վագեց դեպի վարագներն ու սկսեց նրանց խփել կակուղ և ճկուն ճիպոտով:



— Հետ դարձեք, յես ձեր տիրոջ հերն անիծեմ,—բղա-
վում ե նա:

Վարազները հետ դարձան ու հասարակ խոզերի նման
վազեցին իրենց վանդակը:

Իսկ պատանին ճիպոտով քշում ե նրանց:

Ներս արեց վանդակն ու դուռը փակեց:

Այստեղ յես արագ-արագ իջա ցանկապատից և գաղ-
տագողի դուրս գնացի այգուց, վորպեսզի պատանին չը-
տեսնի ինձ:

Ամաչեցի, վոր վախենում եյի, չե՞ վոր վարազները
ընտելացած եյին:



Ս Պ Ի Տ Ա Կ Ա Ր Չ Ը

Փոկորսները ծովում գտան մի սպիտակ արջի քոթոթ: Գույնն սպիտակ էր և դեղնավուն, ինչպես շաքարը մեղրի մեջ: Միայն աչքերը, քիթը և վատների կրունկներն էին սև: Կանգնում էր ու նայում մարդկանց. չէր վախենում նրանցից՝ դեռևս փոքր էր ու անխելք: Ուզեցին սպանել նրան և վաճառել վորպես մսացու, սակայն փսոսացին, քանի վոր շահ չկար դրա մեջ:

Բերեցին նավ և պահեցին շան տեղ:

Ուշագրավ և հետաքրքրական քոթոթ էր: Չէին կապում, ազատ վազվզում էր: Քնում էր մարդկանց կողքին: Գիշերը գալիս էր վորսորդներից մեկի մոտ, սեղմվում նրան, կոլովում կողքին և քնի մեջ ծպծպացնում բերանը— կարծես ծիծ էր ծծում: Միրում էր կոխ բռնել. կանգնում էր հետի վոտների վրա, բռնում մարդու վոտը և, թեև հազիվ էր հասնում մարդու մինչև ծնկները, բայց իսկույն գլորում էր նրան գետին: Մարդն էլ դիտմամբ ընկնում էր գետին: Շատ էր ուրախանում: Մոնչում ու թռչկոտում էր, և տեղն ու տեղը հանկարծ կանգնում չորս վոտների վրա: Փոկորսարանից տուն վերադարձան: Մտածեցին՝ ինչ անեն քոթոթին: Առաջ նա պատկանում էր բոլորին, բայց այժմ վոչ մեկին առնձնապես չէր պատկանում: Ծախեցին բալագանին (փոքրիկ շարժական գազանանոցին) և փողը ծախսեցին հրավերքի:

Չեռնածուն ման էր գալիս գյուղից գյուղ, և ցույց

տալիս գազաններ, այն է՝ առյուծ, գայլ, քարայծ և սպիտակ արջ՝ այդ քոթոթին:

Եշն ու քարայծը միշտ կուշտ էին: Ճանապարհին ուտում էին խոտ, կանաչ և յերբեմն էլ ընկնում վարսակի արտերը, իսկ առյուծը, գայլն ու արջը վատ էին ապրում: Քիչ էր պատահում, վոր ձի կամ կով սատկեր. միայն այդ ժամանակ էին նրանք լեշ ուտում: Մնացած ժամանակ յեփում էին լափ, ինչ վոր ձեռք էր ընկնում, և տալիս նրանց ուտելու:

Իրանց ման էին ածում յերկաթե վանդակներում: Գյուղ գալուն պես, ծանրակառքի պատերից կախված քաթանը դարձնում էին կտուրի վրա, և գազաններին ցույց տալիս:

Ցույց տալուց հետո, ձեռնածուն գլխարկը ձեռքին մոտենում էր ժողովրդին և փող խնդրում: Հարուստները կոպեկ էին տալիս: Չեռնածունները հավաքում էին իրենց աշխատածը, դրանով գնում էին կարտոֆիլ, թեփ ու լափ յեփում գազանների համար: Նրանք էլի սոված էին մնում:

Չեռնածուն նրանց յերկու ամառ ման ածեց գյուղերը: Առյուծը չգիմացավ այլևս և սատկեց: Բալագանում մնացին եշը, գայլը, արջը և քարայծը:

Արջը սովածությունից դադարեց աճել, վտիտ ու նիհար նստած էր վանդակում: Կառքը ճանապարհին, դար ու փոսերով գնալիս, ցնցում էր նրան: Եշը կառքին լծված քաշում էր այն, գայլը վոռնում էր վանդակում, իսկ քարայծը, թոկը պարանոցին, քարշ էր գալիս սայլակի հետևից:

Չեռնածուն բոլոր գազաններին էլ ծախեց կենդանաբանական ցուցահանդեսին, բացի քարայծից, վորովհետև նա սովորական այծ էր:

Կենդանաբանական ցուցահանդեսը շրջում էր մեծ քա-

դաքներ և գլխավոր փողոցների դատարկ խանութներում տեղ վարձում՝ գազաններին ցույց տալու համար:

Այդ տեղերում ողբ խեղդող եր և տաք: Գազանները և թռչունները շոգում եյին և սկսում ճչալ, գոռալ ու վոռնալ: Նրանց լավ եյին կերակրում. բայց արջի համար այդ սնունդն արդեն ուշ եր, և նա չաճեց ու չզարգացավ:

Վանդակները նույնպես կեղտոտ ու փոքր եյին, ինչպես բալագանումն եր: Արջին բաժին եր ընկել մի յերկար և նեղ վանդակ, վորտեղ նա չեր կարողանում ազատ կերպով շուռ գալ: Վանդակի մի անկյունում դրված եր ջրով լիքը մի կիսատակառ—չան, իսկ մյուսում մի ծղոտ: Արջը մտնում եր կիսատակառը և նստում ջրի մեջ. հետո դուրս եր գալիս և յետ ու առաջ ման գալիս վանդակում, չկարողանալով դռնալ այս ու այն կողմ,—վանդակը նեղ եր: Հետի վրաների վրա հետ ու հետ եր գնում, և նորից առաջ գալիս նույն հետքով: Հետ եր գնում մինչև պատը, ապա առաջ գալիս, համում կիսատակառին և ճակատը թրբիկ կպցնում նրան, նորից հետ գնում հետևը կպցնելով պատին: Հետևին և ճակատին կոշտեր եյին առաջացել. ման եր գալիս ման, հոգնում, ապա մտնում տակառի կեղտոտ ու հոտած ջրի մեջ, նորից դուրս գալիս այնտեղից ու սկսում ման գալ հետ ու առաջ:

Շատ տարիներ կենդանաբանական ցուցահանդեսը շրջեց քաղաքներ: Յերկար տարիներ այդպես ման յեկավ արջը: Կոշտերը վերքեր դարձան:

Վերջապես բոլոր գազաններին գնեց կենդանաբանական այգին: Բաղերին, սագերին, կտցարներին, կռունկներին ազատ բաց թողեցին այգում, մի ճահճոտ տեղ ուր կար մի լիճ: Յեղնիկներին, այծերին, նապաստակներին նույնպես ազատ բաց թողեցին այգում: Փասյաններին բաց թողեցին ցանցաձև յերկաթալարերով պատած մի վանդա-

կում: Վանդակների մեջ յերկար մնալուց, մի քանի թռչուններ այնքան եյին թուլացել, վոր չեյին կարողանում լողալ կամ թռչել, և շուտով սատկեցին: Մպիտակ արջի համար հատկացրին մի մեծ տարածություն, հարյուր հազարավոր դուլանոց մի մեծ ջրավազանով:

Ջրոսնիր, լողացիր, ինչքան կուզես:

Այդտեղ արդեն ապրում եյին չորս արջ: Չորսն ել միաբերան գոռում եյին: Հեռվից վազելով չփում եյին ջրի մեջ ու խաղ անում այնտեղ, զվարճանում, մեկը մյուսին սուզում ջրի մեջ, խեղդում: Հետո լայն սանդուղքներով դուրս եյին գալիս տախտակամածի վրա և նորից շրբի, շրբի ընկնում ջրի մեջ:

Իսկ նոր յեկած նիհար ու վախտ արջը յերկար նայեց չորս կողմը, և նորից սկսեց հետ ու առաջ ման գալ: Գնում ե առաջ և նորից հետ ու հետ գալիս:

Մյուս արջերը դուրս եյին գալիս ջրից, մոտենում նրան, թաթերով բոթում, հրում, մոռութներով խփում կողքերին, հրավիրում իրենց հետ խաղալու, իսկ նա թոնթորալով մի կողմ եր գնում: Ամբողջ ժամանակ ման եր գալիս հետ ու առաջ:

Ինչպես յերևում ե, վանդակում յերկար մնալուց նա խելագարվել եր:

Յեթե գնաս Լենինգրադ, անցիր կենդանաբանական այգին, և այնտեղ կտեսնես նրան: Յեվ այժմ նա այնտեղ ել ե ման գալիս:

Հետ—առաջ:

Հետ—առաջ:

Առավոտյան զարթնելուն պես յես հիշեցի, վոր այսոր իմ ծննդյան օրն ե և մի վորևէ բան նվիրելու յեսն ինձ: Յերեսս շուռ տվի պատի կողմից և տեսա, վոր սեղանի վրա վանդակում դրված են ծախ մեծության կանաչագույն կըլոր գլուխներով, կեռ կտցով գեղեցիկ թռչուններ, վորոնք նստած եյին կողք-կողքի, վորպես ճյուղքի վրա յերկու տերևներ:

Մեկ տերևը կարծես թե կիսով չափ չորացած էր,— դա վորձի գլուխն ու պարանոցն էր, վորոնք մոխրագույն եյին:

Որայ. յես շատ ուրախացա: Իրանք անշուշտ մորաքույրս ե նվիրել: Նա թռչնաբույժ ե և հավեր ե պահում: Իսկ վանդակի տակ դրած ե մի մեծ գիրք, «Թռչունների ատլաս,— նկարներով, Պետերբուրգ, Սոյկին, Մոսկվա»:

Նայեցի, բոլոր թռչունների նկարներն ել կային այնտեղ: Մտածում եմ, չկամն արդյոք իմ այս թռչունների նկարներն ել:

Գտա: Իրքի յերկու յերեսում նկարված եյին ամերիկական թռչուններ, կապույտ, կարմիր, դեղին գույների: Ահա և իմոնք, կանաչագույն. նստած են ծառի ճյուղքին. դրանք կոչվում են Ամազոնկա գետից չբաժանվող թռչուններ: Ամազոնկա գետի ափին կան անտառներ և ջուղքիներ (արևադարձային յերկրների գետերի ափերի ճահճուտներ): Նշանակում ե դրանք ճահճային թռչուններ են:

— Այ, կեցցեք դուք. յես ինքս ել հնդիկ եմ— Մե մոհիկան-Սուգարկու: Յես ունեմ և ընկերներ՝ Վիտկա և Ույոժկա, վորոնք նույնպես հնդիկներ են: Վիտկան,— կազմարարի վորդին — Երոտավոր Բելոնը (վայրի ցուլ) և Ույոժկան — Զարհուրելի Աչքը: Ամբողջ փողոցի վրա ապրող դալկադեմ այգեպաններին թալանել ենք, գողանում եյինք նրանցից գազար, շաղգամ և այլն: Մենք ել ունեյինք ցանած, բայց նրանցն ավելի համեղ էր:

Վիտկան գովելի յերիտասարդ էր, իսկ Ույոժկան անհավատ Ուլեգ ե: Դու նրան ճիշտը կասես, իսկ նա կասի՝ «սուտ են խոսում»: Վոչ մի բանի չի հավատում: Իրա համար ել յես նրա հետ կովում եյի:

Մենք այգում ունեյինք հնդկական ճամբար: Նա շինված էր յերկու ծառերի վրա, ձողիկներով. ուներ հատակ և առաստաղ: Իմ անդրավարտիկը պատառոտում էր, մինչև կարողանում եյի բարձրանալ ճամբարը: Մայրս միշտ հարցնում էր ծանոթներին, թե չգիտեն արդյոք նրանք վարտիկի համար մի վորևէ ամուր կտոր: Գտան այդպիսի մի կտոր, վորը կոչվում էր «սատանի կաշի»: Ճիշտ վոր շատ ամուր էր:

Գնացի սեղանատունը՝ թեյ խմելու. գուցե ելի ուրիշ մի լավ բան կընծայեն: Հայրս տվեց ինձ նեկրասովի «Բանաստեղծությունները», մայրս անդրավարտիկ, իսկ տատս գուլպաներ:

Գործս վատ ե:

Ամերիկական թռչուններս ցույց տվի հորս:

Հայրս հարցնում ե.

— Սրանք ել են յերգում:


— Այո, սրանք ել են յերգում:

Նա ասում ե.

— Հը, դու այս բոլոր աղմկոտ թռչուններին իսկույն

բաց կթողնես ազատ: Յես դրանց պատճառով յերկրորդ
ամիսն ե, ինչ չեմ քնում:

Ճիշտ ե, յես շատ թռչուններ ունեյի, ուղիղ քսան հատ:



Բոլորն ել ապրում եյին իմ սենյակում—վանդակների
մէջ: Կարմրակատարիկներ, ազնվասարյակներ, վշասար-
յակներ, բարձրակտուցներ, յերաշտահավեր, ծվծվաններ—
բոլորն ել ուսական: Մի քանիսին յես եյի բռնել թակար-
դով, մի քանիսին ուրիշներն եյին նվիրել, և մի քանիսն
ել գնել եյի: Նրանք շատ լավ եյին ճովողում: Հայրս
քնում եր կողքի սենյակում: Գիշերվա ժամը յերկուսից
նրանք արթնացնում եյին հորս:

Այ քեզ ծննդյան օր, վոչինչ չնվիրեցին և ունեցածս
ել ձեռքիցս առան: Յես շատ տխրեցի:

— Թեյ խմիր, — ասում են ինձ:

— Խմել եմ, — ասում եմ, — շնորհակալ եմ:

Թողի, գնացի այգի:

Մտեցա մորուն, չեմ ուզում ուտել: Այ քեզ ծննդյան օր:

Մտածում եմ, ինչ անեմ, վոր այդ բոլորը նորից սար-
քեմ: Ման եմ գալիս այգում: Բարձրացա ճամբար, ծառի
վրա, ցած իջա, յեղա բոլոր անկյուններում: Տեղ չեմ
գտնում: Մտա ջերմոցը: Այգում կար մի շատ հին ջերմոց:
Այնտեղ առաջ սածիլներ եյին տնկում, իսկ այժմ թափում
են ամեն մի անպետք իր, աղբ, կոտրտված աթոռներ, ջրն-

ջոցներ, չորացած ճյուղեր և այլն: Կտուրի փոխարեն ջեր-
մոցը ծածկված ե ջերմոցային շրջանակներով և ապակի-
ներով: Մտա այնտեղ ու նստեցի:

Շոգ ե, ողբ նեխված ե: Արեգակը շրջանակների արան-
քից այրում ե, ինչպես ջուռգլխներում:

Միայն ծառեր չկան և թռչուններ: Իսկ ինչ կլինի,
վոր ճահճային թութակներին բերեմ այստեղ: Հենց այդպի-
սի շոգն ել նրանց հարկավոր ե: Այստեղ, անշուշտ նրանք
ձագեր կհանեն: Մտածեցի, մտածեցի ու հնարքը գտա,
շատ ուրախացա: Վոչ մի տեղ ել թռչուններին բաց չեմ
թողնի: Լավ բան մտածեցի: Զուռգլի, թռչունների գրախտ
վոր կա, հենց սա յե — այս ջերմոցը:

Ուրախությունից նույնիսկ գոռացի: Յեվ յես շինեցի
ջուռգլին, — թռչունների գրախտը: Հողե հատակին տնկեցի
մացառներ — թփեր, մեջտեղը հարթեցի ու ավազան շինեցի,
ավազ լցրի՝ թռչունների լողանալու համար:


Թիթեղի ծայրերն ու կողքերը ծոցի և ստացվեց գուռի
նման մի բան. մեջը ջուր լցրի: Մարյակների վանդակնե-
րը կախեցի անկյուններում, և ինքս նրանց համար ծղոտից
բներ հյուսեցի:

Խաչկտուցները, խաժկատիկները և բարձրակտուցները
փոխեցի Վիտկայի հետ, և առա նրանից յերկու գեղձանիկ,
վորոնք նույնպես արևադարձային գոտու թռչուններ եյին:
Մի անկյունում յես ունեյի խիտ ջուռգլիներ, այնպես վոր
պատն անգամ չեր յերևում: Սմենախիտ տեղում թռկով
կախեցի ջրով լիքը մի ափսե, և անվանեցի այն «Լեռնա-
յին լիճ»:

Իբր թե ջուռգլիներում լեռ կա և նրա վրա ել լիճ:

Թող թռչունը լողանալուն պես իսկույն նստի ճյուղի
վրա, և վոչ թե գետնից թռչի: Թրջված թռչունը գժվար
ե թռչում:

Մյուս անկյունում կանգնած եր պահարանը, վորը կտորված եր և հին: Բահով ճիւղ կտրեցի, մեխ ճարեցի և պահարանի չորս կողմն ամրացրի. ճիւղի մեջ ճյուղեր խրրեցի՝ թռչունների նստելու համար: Շինեցի բոլորը և սկսեցի թռչուններին տեղափոխել: Բերում եմ վանդակները և տանում: Ամենից առաջ բաց թողի գեղձանիկներին: Վզգալեն դուրս թռան: Թռչկոտելով թռան և իջան յեղևնու վրա, բայց չնստեցին, յերևի փշատերևները ծակում եյին նրանց: Նրանց տոտիկները շատ քնքուշ են, արևադարձային թռչուններ են, փշատերևները նրանց հարմար չեն: Հետո բաց թողեցի ազնվասարյակներին: Նրանք իսկույն բարձրացան գուան վրա և սկսեցին լողալ: Թըրջվեցին ամբողջովին և չկարողացան այլևս թռչել, սկսեցին գետնի վրա վոստոստալ: Բաց թողեցի վշասարյակներին, ծվծվացին, սերինոսին—բոլորն ել: Հետո գնացի թուլթակները բերելու: Բերում եմ նրանց, իսկ նրանք լարված մեքենայի նման ճուփոզում են: Բացի վանդակը—հը թռեք: Թուլթակները չթռան, այլ սողացին ճյուղերի, ծառերի, բների վրայով—ամենախիտ տեղը և մտան թավուտը: Մյուս վոչ յերևում են, և վոչ ել լավում ե նրանց ձայնը: Սկզբում բոլոր թռչուններն ել վախենում եյին, լուցին, իսկ հետո ինչպիսի ճուփոզյուն բարձրացրին շերմոցում,



չես կարող յերևակայել: Սկսեցին յերգել, կովել և լողալ: Ավազի և ջրի մեջ լողանում են: Ճիճուներին վորսացին պատերի վրայից: Պարկով յես բերեցի նրանց համար մըրջյունների բունը: Կերեք ինչքան կուզեք, միայն թե ավելորդ տեղը բերեցի, քանի վոր մըրջյուններին չկերան: Նստեցի ու լսում եմ: Նայեցի-նայեցի, իսկապես վոր շունգլու նման ե: Յես ինձ շատ լավ զգացի, և նույնիսկ ցանկացա հնդկերեն վորևե բան ասել: Հետևյալ որը ընկերներնիս ցույց տվի թռչունների դրախտը: Վիտկան չհավանեց: —Շոգ ե,—ասաց: Իսկ Ույոթկան (Ուեգը—Չարհուրելի Աչքը) սկսեց ամբողջ որերով ինձ հետ միասին նստել շունգլիում: Միայն թե չի հավատում, վոր այդ շունգլի յե: —Նման չի,—ասում ե: Չունգլիներում,—ասում ե,—լիանոսներ և տաք յերկրի մոծակներ են լինում: Իսկ վորտեղից կարող ես սրա համար մոծակներ գտնել: Թուլթակներն սկսեցին բուն շինել: Խողովակում հյուսեցին պաստառները: Հին պաստառները թափված եյին պահարանի վրա: Թուլթակներն սկսեցին մանրացնել թուղթը, կրծոտել և պաստառոտել: Թղթի կրծած կտորները կոխում եյին ավելի խոր, հյուսվածքի մեջ, և յերբեմն գետնից տանում եյին ծղոտներ կամ ցնցոտիներ: Յեվ ճուփոզում եյին անվերջ: Եզ թուլթակը ճու ածեց և թուխս նստեց: Մենակ ներս մտավ հյուսվածքի մեջ: Վորձը նրա հետևից ներս խցկվեց, բայց եզը չթողեց և հետ քշեց: Կես ժամի չափ նստեց բնում, հետո դուրս յեկավ խճճված փետուրներով և սկսեց կուտ ուտել ու ջուր խմել:

Իսկ մենք՝ յես և Ոլեզը, կամաց-կամաց գնացինք դե-
պի պահարանը — բնի մոտ: Նայեցինք և վոչինչ չտեսանք:
Բնի մեջ ձուռն ծածկված ե գանազան կրծկված կտոր-
ներով:

Ոլյոժկան կրկին չի հավատում, ասում ե.

— Վոչ մի ձուռն յեյ չկա, եգ թուժակն ենպես իզուր
նստած ե:

Իսկ յես պատասխանում եմ.

— Ինչպես թե՛ չկա. ձուռն յե հանել:

— Յուլյց տուր, — ասում ե:

Իսկ ինչպես ցուլյց տամ, կարող ե կոտորվել և դրա հա-
մար ել ցուլյց չտվի:

Մի որ հետո ածեց սև մի ձուռն ու նստեց ձագ հանելու:

— Ահա, Ոլյոժկա, — ասում եմ, — մի գուլյգ թուժակ ել
կուռնենանք շուտով: —

Լուռ ու մուռն շ նստած ե բնում եգ թուժակը:

Արու թուժակը ման ե գալիս պատանների մոտ. նա
նման ե ծուռտոտիկ կանաչ գուլյնի ճնճղուկի. խոսում ե,
ճովողում ե: Եգ թուժակը դուրս ե գալիս, համբուրվում
նրա հետ և նորից պահ մտնում:

Ոլյոժկայի հետ մենք վիճեցինք, թե ինչ գուլյնի յես
ձվերը:

Յես ասում եյի, պիտի վոր կապուլյտ լինեն, ինչպես
սերինոսինը և դեղձանիկինը:

Իսկ նա ասում ե.

— Կանաչ են ինչպես ագուավինը:

Թուժակի թուխս նստած որից անցավ մի շաբաթ:
Առավոտյան յես գալիս եմ շուռնգլի և տեսնում, վոր Ոլյոժ-
կա — Ոլեզը բնի փաթթոցը մոտեցրել ե աչքին ու նայում
ե: Բարձրացել ե դեպի առաստաղը լույսի դեմ նայելու:

Ձվերը դուրս գլորվեցին, գիպան քթին ու կոտորվեցին:


Մենք ճայթյունի և վոչ մի ձայն չիմացանք, տեսնեմ Ոլ-
յոժկայի ամբողջ յերեսը դեղնել ե ձվի դեղնուցից:

Յես վազեցի կովելու, գետին զցեցի նրան և դուրս
վունդեցի: Իսկ ինքը վրժժաց:

Ախ, հիմար Ոլյոժկա — Ոլեզ, Չարհուրելի Աչք: Չկարո-
ղացավ սպասել...

Ձվերն սպիտակ գուլյնի եյին:

ԾՈՎԱԾԱԾԱՆ ԶՈՒԿԸ*



*) Փարբիկ ձկնորի տեսակ:

Մառցարանը լեփ լեցուն լցրին սառույցով: Մի կտոր սառույց վերցրի ձեռքս: Տեսնեմ սառույցում հրաշք ե ուղղակի:

Մառցի կտորի մեջտեղում ձուկ կա: Մի փոքրիկ ծովածածան, թևերը բացել, աչքերով նայում ե, թեփուկը փայլում ե:

Նայեցի, նայեցի, զարմացա. քիչ մնաց մատներս սանեցնեյի: Մառույցը տուն բերեցի և դրի ափսեյի մեջ, նորից նայեցի և զարմացա. հետո ինձ ուր վոր կանչեցին:

Մոռացա ձկանը:

Յերկրորդ օրն առավոտյան հիշեցի:

Ափսեյում սառույցի մեջ սատկած ձկան փոխարեն կար ջուր և կենդանի ձուկ: Չուկը կենդանացել եր: Հետո յես ինչ վոր մի տեղ կարգացի նշանավոր փորձերի մասին:

Սառեցրել են զանազան կենդանիներ:

Մկանը մի վայրկյանով սառեցրել են, և հետո նա կենդանացել ե:

Գորտին մի տարով. փայտոջիլն ութ տարով:

Ձկանը նու յնպես յերկար ժամանակով:

Յե՛վ սառույցն աստիճանաբար հալվելով, նրանք նորից սկսել են ապրել, շարժվել, ուտել... Դարձյալ նույն վայրի գազանները դարձել, վորոնք սառույց եյին դարձած:

Յե՛վ վորքան կենդանու մարմինը հասարակ ե, այնքան ավելի հեշտ ե նրա վրա փորձեր կատարելը, և դրանից նրան վոչինչ չի պատահի:

Ո՛վ գիտե, գուցե բեռում հազարավոր տարիների ընթացքում սառույցի մեջ մնում են հսկայական չտեսնված ու չլսված ձկներ և սողուններ, վորոնք ապրելիս են յեղել այնտեղ, յերբ բեռներ չեն յեղել և ամենուրեք յեղել ե տաք: Կվերցնեն սառցակույտը, կհալեն և հրաշքը կկենդանանա:

Յե՛վ այդ կարո՞ղ ե պատահել:



Վ Ե Ր Զ

«Ազգային գրադարան»
Barcode
NL0391378

4546

9122 1 0014



ЕВГЕНИЙ ЧАРУШИН
ВОЛЧИШКО И ДРУГИЕ
ГИЗ ОСРА Эривань. 1986 г.